




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ի. ՍՏԱԼԻՆ

3 K 33

6-28

1118

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ



ԱԶԵՐՆԵՇԻ
Բազու-1932

10769

2010

ՀՀ ԶՆՆՈՒՄԻ մեթոդային Բազ, Բ-Marskoj vā Krasno-Prēsniēnsqī 16/36.
Baş Mətbəat Mədirliqi № 3140. ADN 226. Sifariş № 447. Səjə 3000.

3K 33
2-28

Vh

B 20 01

Ստորև հրապարակվող «Նամակ Կովկասից»-ը հան-
դիսանում է «Պրոլետարիյ»-ի (բուլղերիկները որգան,
հրատարակվում էր 1906-1909 թ.) համար 1909 թ.
դեկտեմբերին (հին տոմարով) ընկ. Ստալինի գրած
«Նամակներ Կովկասից» սերիայի նամակներից մեկը:
Այդ նամակները գրվել են Բազվից, ուր ընկ. Ստա-
լինն այդ ժամանակ գործում էր անլեգալ վիճակում:
Սովիեզգոգսկի աքսորից փախչելուց հետո:

Արխիվային նյութերի համաձայն՝ ընկ. Ստալինը
1909 թվի դեկտեմբերին «Պրոլետարիյ»-ին ուղարկել
է 3 թե 4 «Նամակ Կովկասից»: Դրանք «Պրոլետարիյ»-
ում արդեն չէին կարող տպագրվել, վերովհետև
Կենտկոմի 1910 թվի հունվարի պլենումի՝ Փրակցիոն
կենտրոնները վոչնչացնելու մասին կայացրած վերոշ-
ման համաձայն բուլղերիկները դադարեցրել էին իրենց
առանձին որգանի հրատարակությունը: Իսկ Ռ Ս Դ Բ Կ
կենտրոնական որգան «Սոցիալ-դեմոկրատ»-ում, վորի
խմբագրությունը մինչև 1911 թվի վերջը կազմում էին
յերկու բուլղերիկ (Լենին և Զինովյեվ), յերկու մենշե-
վիկ (Մարտով և Դան) և յեհացիներից մեկը (Վար-
սկի, հետո Լեդեր), տպագրվել է միայն մի «Նամակ
Կովկասից» (№ 11, 1910 թ. 26 (13) փետրվարի)՝ նվեր-
ված Բազվի գործերի գրությունը:

Իսկ այս տեղ տպագրվող «Նամակը», վորը խարաղա-
նում է Թիֆլիսի մենշևիկների լեկվիդատորական գոր-
ծունեյթյունը, չէր կարող, իհարկե, բաց Թոդնիկի
«Սոցիալ Դեմոկրատ»-ի եջերում, նրա խմբագրության
մենշևիկական մասի կողմից և տպագրվել է միայն
1910 թ. հունիսի 7-ին (մայիսի 24-ին) «Իսկուսիտն
Թերթիկի» («Սոցիալ-դեմոկրատ»-ի հավելված) № 2-
ում, նրա պատասխանի հետ միասին գրված կով-
կասյան մենշևիկների լեդեր Ան-ի (Ն. Ժորդանիայի
գրական ծածկանունը) կողմից, վորն իր պատասխա-
նով, ինչպես ասել է Լենինը, միայն հաստատել է
«Նամակ Կովկասից»-ի հեղինակի ամենաձանր մեղա-
դրանքները» (տես՝ հատոր XIV, էջ 317): Ընկ. Ստալինի
նամակն ունեցել է վոչ միայն տեղական (Թիֆլիսյան
կամ կովկասյան) հետաքրքրություն: Նրանում շոշա-
փած հարցերն ունենին համակուռակցական ահագին
նշանակություն, վորովհետև Թիֆլիսի մենշևիկները

67.7.55
379675
2007

որինակով բաց եր արվում ընդհանուր-առևտրական լիկ-
վիդատորության ելուցումը, վորը արոցկելով աջակ-
ցությամբ թունդ ծաղկել եր ռեակցիայի տարիներին,
վորի դեմ բոլշևիկներին վիճակվեց կատաղի պայ-
քար մղել մի շարք տարիների ընթացքում: «Նա-
մակն» արտատպվում ե «Դիսկուսիոն Թերթիկեց»
առանց փոփոխութունների:

ՆԱՄԱԿ ԿՈՎ ԿԱՍԻՑ

(1909 p.)

Արդյունաբերության զարգացման տեսակետից
Թիֆլիսն ուղղակի Բագվի հակադրությունն ե: Յեթե
Բագուն հետաքրքիր ե վորպես նավթարդյունաբերու-
թյան կենտրոն, ապա Թիֆլիսը կարող ե հետաքրքիր
լինել միայն վորպես Կովկասի վարչական-առևտրա-
կան և «կուլտուրական» կենտրոն: Թիֆլիսում բոլոր
արդյունաբերական բանվորները մոտ 20 հազար են,
այսինքն ավելի քիչ, քան թե զինվորների և վոստի-
կանների թիվը: Միակ խոշոր ձեռնարկը—յերկաթու-
ղային արհեստանոցն ե (մոտ 3500 բանվոր): Մյուս
ձեռնարկներում 200-ական, 100-ական, իսկ մեծ մա-
սամբ 40-20-ական հոգի: Դրա փոխարեն Թիֆլիսը
բառիս բուն նշանակությամբ լցված ե առևտրական
ձեռնարկներով և նրանց հետ կապված «առևտրական
պրոլետարիատով»: Ռուսաստանի՝ միշտ կենդանի և
տենդոտ խոշոր շուկաներից ունեցած թույլ կախու-
մը Թիֆլիսի վրա դնում ե լճացածության կնիքը:
Իսկ խոշոր արդյունաբերական կենտրոններին հա-
տուկ դասակարգային սուր ընդհարումների բացակա-
յությունը՝ նրան դարձնում ե ճահճի պես մի բան,
վոր զրսից ե խթանի սպասում: Հենց զրանով ե բա-
ցատրվում այն, վոր մենշևիկները՝ իսկական «աջ»
մենշևիկներն այդպես յերկար մնացել ե Թիֆլիսում:
Ուրիշ ե Բագուն, վորտեղ բոլշևիկների սուր դա-

սակարգային դիրքը կենդանի արձագանք ե գտնուում բանվորների միջև։ Այն, ինչ վոր Բազմում «ինքն ըստ ինքյան պարզ ե», դա Թիֆլիսում պարզ ե դառնում միայն յերկար դիսկուսիաների հետևանքով, բոլշևիկները անհաշտ ճառերը մարսվում ե մեծ դժվար ությամբ։ Հենց դրանով ե բացատրվում Թիֆլիսի բոլշևիկների «առանձին հակումը» դեպի դիսկուսիաները և, ընդհակառակը, մենշևիկները ցանկությունը հնարաւորության չափ «խուսափել» դիսկուսիաներից։ Սակայն ասածիցս բղխում ե միայն այն՝ վոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատների աշխատանքը՝ Թիֆլիսի պրոլետարիատի սոցիալիստական լուսավորության վերաբերմամբ շատ հաճախ և անխուսափելի որեն պիտի ընդունի մենշևիզմի դեմ մղած գաղափարական պայքարի ձև։ Այդ նկատի առնելով՝ հատուկ հետաքրքրություն ե ստանում այն գաղափարական միջնորդի թեկուզ և թռուցիկ վերլուծությունը՝ վորի հետ, ամենից առաջ, վիճակվում ե պայքարել և վորն ստեղծում են Թիֆլիսի մենշևիկները, վորոնք դեռ ես գերակշռում են Թիֆլիսում։ Այդ միջնորդը կարելի ե վորակել վորպես լիկվիդատորական, լիկվիդատորական վոչ միայն կազմակերպչական իմաստով, այլ և տակտիկական, այլ և ծրագրային։ Հենց այդ միջնորդի բնութագրումից կսկսենք մեր թռուցիկ ակնարկը՝ Թիֆլիսի կուսակցական գործերի դրության մասին։

Ծրագրային լիկվիդասորութուն

Այն որդանը, վորի մեջ իր արտացոլումն ե գրտնում մենշեիկներին «հասարակական կարծիքը» հանդիսանում ե վրացական մենշեվիկական մամուլը: Թիֆլիսի մենշեիկների հալատամբը արտահայտված

և «Առորյա հրատապ հարցեր» հոդվածներում (տես. «Ազրի» և «Դասացկիսի»*) համարները:

Այդ հոգվածների հեղինակը հանդիսանում է Թեֆլիսի մեհենդլիկներին պատկանող ազգեցիկը ընկ.—Աււր*): Անց-
նենք այդ հոգվածների բովանդակությանը՝ հոգվածներ, վո-
դոնք նախապատրաստվել են գաղափարական լիվլիդատորու-
թյունի Թեֆլիսում:

Հիշված հողավաճառքում հեղինակը ձեռնարկում է «բոլոր արժեքների վերագնահատմանը» և այն յեղրակցությունն է հանդում, թե կուսակցությունը (մանավանդ բոլշևիկները) մոլորվել են, վոր վերաբերում է նրա մի քանի ծրագրային, իսկ առանձնապես տակտիկական դրույթներին: Հեղինակը կարծիքով անհրաժեշտ է «արմատական կերպով փոխել կուսակցական ամբողջ տակտիկան», կարելի դարձնելու համար «բուրժուազիայի և պրոլետարիատի ուժերի միացումը»—հեղափոխության հաղթանակի միակ գրավականը: Սակայն թող խոսի ինքը հեղինակը:

«Բոլորէկեաներն ապացուցում եին, —ասում ե հեղինակը, վոր նա (պրոլետարիատը) պիտի իրականացնի (բուրժուական հեղափոխութիւնում) իր ծրագրի ամբողջ մինիմումը: Բայց չե՞ վոր այդ մինիմումի սոցիալական մասի իրականացումը կտանքեր այն բանին, վոր կկաշկանդէր բուրժուազիայի արտադրութիւնը, կառաջացնէր ամբողջ բուրժուազիայի բողոքը՝ սկիզբ դնելով հսկայական հակահեղափոխութեան... Ո՞վ կհամարձակվի պնդել, թե 8-ժամյա բանվորական որվա իրականացումը համապատասխանում ե ժամանակակից անդարգացած բուրժուազիայի շահերին»: Պարզ ե, վոր, «Բոլորէկեաների մինիմում-ծրագրի իրագործումը հասարակ դեկլարացիա ե հանդիսանում» (տես, «Ալգրի» № 17, 1908 թ. փետրվար):

Իհարկե, ամբողջ միևնույն-ծրագրի իրագործման
մասին խոսում եին վոչ միայն բոլշևիկները և պատ-

*) «Ազրի (Միսր)»-վրացական լեզվւ մենշնկիկան թեւթ, վոր լույս եր տեսնում թիֆլիսում 1908 թ. հունվարի 24-ից մինչև մարտի 2-ը (լույս ե տեսել նաև հետո 1914 թ. մարտի 1-ից մինչև հուլիսի 11-ը), Վրացաց-կիսի (Սվիզը)-վրացական լեզվւ մենշնկիկան թեւթ, վոր լույս եր տեսնում թիֆլիսում 1908 թվի մարտի 4-ից մինչև 30-ը, ՊՌ.

*) Ան—վրացական մենշևիկները լիդեր, այժմ եմիգրանտ Նոյ Ժորդանիայի գրական ծածկանուշն է։ ՆՄԲ.

մությունը վոչ մի բուլեվարից մինչև մութ-ծրագիրը
չգիտե,—բացի համակուսակցականից, սակայն տվյալ
դեպքում հետաքրքիրը դա չէ: Կարևորն այն է, վոր
նկատի առնելով «բուլեթուազիայի անդարգացած լի-
նելը» և այստեղից բխող հակահեղափոխական վտան-
գը, մեր հեղինակը սպառազինվում է ծրագրի «սո-
ցիալական մասի», վորպես «հասարակ դեկլարացիայի»
դեմ, վորն, ըստ յերևույթին, յենթակա է լիկվիդա-
ցիայի:

Արդյունաբերության իսկական դրուժյան վոչ մի
վերլուծություն (ընկ. ՍՆ-ը, պարզ է, վոր ճիշտ չի
արտահայտվում՝ արդյունաբերության հետամնացու-
թյունն անվանելով «բուլեթուազիայի անդարգացա-
ծություն» Կ. ՍՏ). վոչ մի թիվ, վոչ մի փոքր ինչլուրջ
տվյալ չեք գտնի ընկ. ՍՆ-ի մոտ: Նա միայն յեխում
է այն մերկ դրույթից, թե բուլեթուազիան չի հան-
դուրժի Ց-ժամյա բանվորական որվա իրականացմանը,
այն ինչ, առանց «բուլեթուազիայի և պրոլետարիատի
ուժերի միացմանը» հեղափոխության հաղթանակն
անհնարին է, ուրեմն և թող՝ կորչի ծրագրի «սոցիա-
լական մասը»...

Մենք չենք սկսի ապացուցել հեղինակի պնդում-
ների անմտությունը, պնդումները, վոր մեր ժամա-
նակի լիբերալները շարունակ առաջ են քաշում սո-
ցիալ-դեմոկրատների դեմ:

Մեր կարծիքով միանգամայն բավական է նրան-
ցից մեջբերումներ անել, վորպեսզի միանգամից վոր-
սանք թիֆլիսի մենչևիկների դիմագիծը...

Սակայն մեր հեղինակը զինվում է ծրագրի վոչ
միայն «սոցիալական մասի» դեմ: Նա նույնպես չի
խնայում նաև նրա քաղաքական մասը, թեկուզ վոչ
այդպես ուղղակի և բացարձակ կերպով: Լսենք նրան,

«Միայն պրոլետարիատի կամ միայն բուլեթուազիայի*)
պայքարը վոչ մի դեպքում չի կոտրի ռեակցիան... Պարզ է,
վոր նրանց ուժերի միացումը, նրանց այս կամ այն կոմ-
բինացիան և նրանց ուղղումը դեպի մի ընդհանուր նպատակ՝
ռեակցիայի վրա հաղթանակ տանելու միակ ուղին է
(ընդգծումը մերն է) կազմում»... «Ռեակցիայի պարտու-
թյունը, սահմանադրության նվաճումը և վերջինս կյանքի
մեջ մտնելը կախված է բուլեթուազիայի ու պրոլետարիատի
ուժերի գիտակցաբար միացնելուց և նրանց ընդհանուր նպա-
տակին ուղղելուց»...

Ընդամեն «պրոլետարիատը պետք է ընթանա այնպես, վոր
իր անհաշտվողականությունը չթուլացնի ընդհանուր շար-
ժումը»: Բայց քանի վոր «բուլեթուազիայի մոտավոր պահան-
ջը կարող է լինել միայն չափավոր սահմանադրությունը»,
ապա, ակներև է, պրոլետարիատի պարտականությունն է
հանդիսանում դեն գցել իր «արմատական սահմանադրու-
թյունը», յեթե նա չի ցանկանում «թուլացնել ընդհանուր շար-
ժումն իր անհաշտվողականությամբ» և քայքայել «բուլեթու-
ազիայի ու պրոլետարիատի ուժերի գիտակցորեն ուղղումը
մի ընդհանուր նպատակի», մի խոսքով, յեթե նա չի ցանկա-
նում նախապատրաստել հակահեղափոխության հաղթանակը:
(Տես «Դասակարգի» № 4, 1908թ.)

Ցեղրակացությունը պարզ է. կորչի դեմոկրա-
տական հանրապետությունը, կեցցե «ընդհանուր շար-
ժումը» և... «չափավոր սահմանադրությունը», ի հար-
կե, հեղափոխության «հաղթանակի շահերի» համար...

Մեր առաջ, ինչպես տեսնում ենք, նախկին սո-
ցիալ-դեմոկրատ Վասիլյեվի «Տոմարիչ»-ում 1906 թվին
տպած «դասակարգերի միացման» (հայտնի հոդվածի
վատ շարադրություն է) պրոլետարիատի դասակարգա-
յին խնդիրների ժամանակավոր մոռացման, դեմոկրա-
տական հանրապետության որակարգից հանման մասին

*) «Բուլեթուազիա» ասելով հեղինակն ամեն տեղ հասկանում է «միջին»
լիբերալ բուլեթուազիան, «վորի իդեոլոգները հանդիսանում են կադետ-
ները»: Կ. ՍՏ.

և այլն*: Տարբերությունը նրանում է, վոր Վասիլ-
յեֆն խոսել է ուղղակի ու պարզ, իսկ ընկ. Ան-ը
ամաչում է բավականաչափ պարզ խոսել:

Ներկայումս մենք վոչ ժամանակ, վոչ էլ տրամա-
դրություն ունենք քննելու այդ ամբողջ լրբերալական
թոթովանքը, վոր վաղուց քննված ու հիմնականում
գնահատված է ռուսական սոցիալ-դեմոկրատական
մամուլում: Մենք կցանկանայինք միայն իրերը կո-
չել իրանց սեփական անուններով. մեր հեղինակի
ծրագրային վարժությունները, վոր Թիֆլիսի մենչևիկ-
ներն ընդունել են վորպես ֆրակցիոն «նոր» մանի-
ֆեստ, հանդիսանում են կուսակցության մինիմում-
ծրագրի լիկվիդացիան, մի լիկվիդացիա, վոր պահան-
ջում է մեր ծրագրի հարմարեցումը կադեաների ծրա-
գրերին:

Թիֆլիսի մենչևիկների «նոր» ծրագրից անցնենք
նրանց «նոր տակտիկային»:

Տակտիկական լիկվիդացիոնություն

Ընկ. Ան-ն առանձնապես անբավական է կուսակ-
ցության տակտիկայից, վորը նրա կարծիքով, ան-
հրաժեշտ է «արմատապես փոփոխել» (տես. «Դասաց-
կիսի» № 4): Ուստի, նա իր հոդվածների մեծ մասը
նվիրում է այդ տակտիկայի քննադատությանը: Նա

*) Վասիլե Ն. Վ. — աչքի ընկնող մենչևիկ, մոտ կանգնած Պլեխանովին:
Նրանից հետո, յերե Պլեխանովը 1906 թվին ձախ լեքերալների «Տոլարիշ»
թերթում հանդես յեկավ՝ սոցիալ դեմոկրատների ու կադեաների ընդհա-
նուր պատափորմի առաջարկով՝ Պետական Դումայի բնորական կամպոն-
իայում, Ն. Վասիլեը նույն «Տոլարիշ»-ում (№ 142, 1906 թ. 30 (17)
դեկտեմբերի) գետեղեց «Ի՞նչ անել» հոդվածը, վորի մեջ վոզլուներով
Պլեխանովի յեղութը՝ հասցրեց այն տրամաբանական վախճանին, առա-
ջարկելով. — յեխնելով այն բանից, թե, նրա կարծիքով, դասակարգային
պայքարն «սպանիչ ու հանցալից» է «ժամանակավորապես հրաժարվել
ամենայնով ծրագրերից և ձուլվել մի սահմանադրական կուսակցության
մեջ»: Լենինը հենց այն ժամանակ Ն. Վասիլեովի քաղաքական դիրքի գնա-
հատականը տվավ իր «Պլեխանովն ու Վասիլեը» հոդվածում (տես. հատոր
X, էջ 236—241). — ՄՄԲ.

առանձնապես հարձակվում է «Պլեխանովի հայտնի
ֆորմուլայի» վրա («հեղափոխությունը Ռուսաստա-
նում կհաղթանակի վորպես բանվորական շարժում
կամ բոլորովին չի հաղթանակի»*), նույնացնելով այն
պրոլետարիատի հեգեմոնիայի դրույթի հետ, և վրձ-
ռում է, թե նա չի դիմանում քննադատության: Նա
առաջարկում է այդ «ֆորմուլան» փոխել «բուրժու-
ազիայի և պրոլետարիատի ուժերի միացման» «նոր»
(հին!) դրույթով «մի ընդհանուր նպատակի» տանող
«ընդհանուր շարժման» շահերի համար: Լսեցեք.

«Բուրժուական հեղափոխության մեջ պրոլետարիատի
դեկավար դերի դրույթը չի արդարանում վոչ Մարքսի թեորիա-
յով, վոչ էլ պատմական փաստերով»:

Հենումն թեորիայի վրա.

«Պրոլետարիատը չի կարող իր սեփական ձեռքով կարգեր
սահմանել՝ իր սեփական թշնամիների համար: Ուրեմն բուր-
ժուական հեղափոխության դեկավարությունը պրոլետա-
րիատի կողմից անհնար է»:

Հենումն պատմական փաստերի վրա.

«Մեր հեղափոխությունը միաժամանակ յեղել է մեր
բանվորական շարժումը, չնայած դրան հեղափոխու-
թյունը չի հաղթանակել: Պարզ է, վոր Պլեխանովի ֆորմու-
լան չի արդարացել» (տես. «Ազրի» № 17):

Կարճ և ազդու: Պետք է միայն խղճալ գերմանա-
կան սոցիալ-դեմոկրատիային, վորը (պետք է վոր
թեթևամտության շնորհիվ) դեռևս Լոնդոնի համադու-
մարին ուղղած իր վոլջույնի նամակում ընդունել է,
թե մեր հեղափոխության մեջ պրոլետարիատի դե-
կավար դերը միանգամայն արդարանում է ինչպես
«Մարքսի թեորիայով», նույնպես և «պատմական
փաստերով»: Մենք արդեն չենք խոսում մեր (դժ-
բախտ!) կուսակցության մասին...

*) Գ. Վ. Պլեխանովի խոսքերը, վոր նա ասել է 1889 թվին Փարի-
զում գումարված միջկողային սոցիալիստական կոնգրեսում արտասա-
նած իր ճառում: ՄՄԲ.

Իսկ ի՞նչով ե փոխարինում մեր հեղինակը պրո-
լետարիատի ղեկավար դերը, ի՞նչ ե նա առաջարկում
վերջինիս փոխարեն:

«Միայն պրոլետարիատի—ասում ընկ. Ան-ը,—կամ
միայն բուրժուազիայի պայքարը վոչ մի դեպքում չի
կոտրի ռեակցիան... Պարզ ե, վոր նրանց ուժերի միացումը,
նրանց այս կամ այն կոմբինացիան ե նրանց մի ընդհա-
նուր նպատակի ուղղելը՝ ռեակցիայի վրա հաղթանակ տա-
նելու միակ ուղին ե»:

Ընդ մին «պրոլետարիատը պետք ե ընթանա այնպես,
վորպեսզի իր անհաշտվողակաճությամբ չթուլացնի ընդհա-
նուր շարժումը»... (Տես՝ «Դասացկիսի», № 4): Վորովհետև
հավատացնում ե հեղինակը, «վաճանք քույր ե դասակարգա-
յին պայքարը պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև, այն-
քան ել հաղթական ե (ամեն տեղ ընդգծումները մերն են
Կ. ՄՏ.) բուրժուական հեղափոխությունը, իհարկե, մյուս
հավասար պայմանների դեպքում» (տես՝ «Աղբի» № 15):

Թե ինչ «մյուս հավասար պայմանները» մասին
ե խոսումի հեղինակն—Ալլահն ե իմանում: Պարզ ե
միայն մի բան, վոր նա քարոզում ե դասակարգային-
պայքարի թուլացում... հանուն հեղափոխության շա-
հերի: Մեր ամբողջ հեղափոխություն փորձով հաստատ
ված այդ դրույթը, թե այդ հեղափոխության հաղ-
թանակը կլինի այնքան ավելի լիակատար, վորքան
հեղափոխությունն ավելի կհենվի ընդդեմ կալվածա-
տերերի ու լիբերալ բուրժուականների՝ իր հետեվեց գյու-
ղական չքավորությունը տանող պրոլետարիատի դա-
սակարգային պայքարի վրա,—այդ դրույթը մեր հե-
ղինակի համար մնացել ե յոթը կնիքով կնքված գաղ-
տնինք: «Պրոլետարիատի ուժերի միացումը բուրժուա-
զիայի ուժերի հետ»—ահա թե ինչի մեջ ե գրա-
նում ընկ. Ան-ը հեղափոխության հաղթանակի միակ
գրավականը:

Բայց դա ի՞նչ բուրժուազիա ե, վորի վրա այդ-
քան մեծ հույսեր ե դնում մեր հեղինակը: Լսեցեք.

«Ռեակցիոներները,—ասում ե մեր հեղինակը,—առաջնա-
պես խիստ են կոպում կադեաների կուսակցության դեմ...
վորովհետև... Ռուսաստանի ապագա տերերը դուրս են գա-
լիս հենց այն միջին դասակարգից, վորի իդեոլոգիան են
արտահայտում կադետները: Ռեակցիոներները պետական
խշտանությունը խելու ընդունակ ե միայն տերապետելու
համար հասունացած միջին բուրժուազիան, այդ դասակար-
գը հանդիսանում ե նրանց ուղղակի մրցակիցը, ուստի ե
ռեակցիոներները նրանից վախենում են ամենից ավելի»:
Ընդհանրապես «բոլոր հեղափոխություններում ռեակցիոն
դասը վախեցել ե վոչ այնքան հեղափոխականներից, վոր-
չափ չափավոր բուրժուազիայից: Ինչո՞ւ: Վորովհետև միայն
այդ դասակարգը հանդիսանում ե վարչության սանձի ըն-
դունողը՝ հին ռեժիմի ձեռքից, ինչպես մենք այդ ասել ենք
վերը: Հետևաբար, հենց այդ դասակարգն ե կոչված՝ շնոր-
հիվ իր չափավոր սահմանադրության՝ նոր կարգերն ընդու-
նելի դարձնելու ահագին մեծամասնության համար ե այդ-
պիսով ռեակցիայի վտարի տակի հողը վոչնչացնելու» (տես.
«Աղբի» № 24): Բայց քանի վոր «բուրժուազիան առանց
պրոլետարիատի չի կարող նոր կարգեր դնել», ուստի «պրո-
լետարիատը պետք ե ոգնի բուրժուական ոպողիցիային»
(տես. «Դասացկիսի» № 4):

Յեվ այսպես, «չափավոր» կադետական բուրժուա-
զիան իր «չափավոր» միապետական սահմանա-
դրությամբ—ահա թե ով, դուրս ե գալիս, պետք ե
փրկի մեր հեղափոխությունը:

Իսկ գյուղացիությունը, վորն ե նրա դերը հե-
ղափոխության մեջ:

«Իհարկե,—ասում ե մեր հեղինակը,—գյուղացիությունը
կիսառնվի շարժմանը ե նրան տարերային ընույթ կտա,
բայց վճռական դերը կիսողան ժամանակակից դասակար-
գերից միայն յերկուսը—չափավոր բուրժուազիան ե պրո-
լետարիատը» (տես. «Դասացկիսի» № 4):

Յեվ այսպես, դուրս ե գալիս, վոր գյուղացիու-
թյան վրա կարիք չկա առանձնապես հույս դնելու:

Այժմ ամեն ինչ պարզ ե: Հեղափոխության հաղ-
թանակի համար հարկավոր ե չափավոր կադետական

բուրժուազիան՝ չափավոր սահմանադրութիւնով:
Սակայն նա մենակ ընդունակ չե հաղթանակելու,
նրան հարկավոր ե պրոլետարիատի ոգնութիւնը:
Պրոլետարիատը պետք ե նրան ոգնի, վորովհետեւ չկա
մեկը, հաշվելով նաեւ գյուղացիութիւնը, վորի վրա
հույս դնի, բացի չափավոր բուրժուազիայից: Սակայն
դրա համար նա պիտի դեն շարտի իր անհաշտու-
ղականութիւնը և, ձեռք մեկնելով չափավոր բուր-
ժուազիային, ընդհանուր պայքար տանի կադետական
չափավոր սահմանադրութեան համար: Մնացածն ինքն
իրեն հասկանալի ե: Կուսակցութիւնը, — վոր հեղա-
փոխութեան հաղթանակի գրավականը տեսնում ե բան-
վորների ու գյուղացիների պայքարում՝ ընդդէմ չափա-
վոր բուրժուազիայի և ճորտատերերի, մոլորվում ե:
Մի խոսքով գյուղացիութիւնն իր հետեից տա-
նող պրոլետարիատի ղեկավար դերի փոխարեն՝ պրո-
լետարիատին խաբող կադետական բուրժուազիայի
ղեկավար դերը:

Այդպես ե Թիֆլիսի մենշևիկները «նոր» տակտի-
կան:

Այդ բոլոր գոեհիկլիբերալ հնոտիքը, մեր կարծի-
քով, քննելու անհրաժեշտութիւն չկա: Անհրաժեշտ ե
միայն մատնանշել, վոր Թիֆլիսի մենշևիկները
«նոր» տակտիկան հանդիսանում ե հեղափոխութեան
կողմից հաստատված կուսակցական տակտիկայի լիկ-
վիդացիան, մի լիկվիդացիա, վորը պահանջում ե
պրոլետարիատին դարձնել չափավոր կադետական
բուրժուազիայի:



4. US.

2013



8 400.

I. Stalin

KAFKASJADAN MƏQTYB

AZƏRNƏŞR—1932